

Ա.Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

* Սկիզբը տե՛ս ՀՀ ԳԱԱ Լրագրեր հասարակական գիտությունների, 1998 № 2:

նարկում է միայն հնարավորությունը: Ուստի, հանրահայտ իրողություններ պարունակող նյութերը հարցականով վերնագրելը առնվազն անհմատ է:

Հետաքրքիր նորույթը երբեմն կորչում է փաստը անտաքքերությամբ արձանագրող վերնագրի մեջ, մինչդեռ, այդ փաստի հետևում թաքնված է մի իրողություն, և այս վերջինը պետք է արտացոլվեր վերնագրում:

«ԹՈՒՐԶ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ ԱԴՐՔԵՋԱՆՑԻՆԵՐԻՆ ԱՆԱՍՆԱԿԵՐ ԵՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ»

Ոչ մի անսովոր բան չկա այս վերնագրում և թվում է, թե խոսքը անասնակերի մասին է: Մի խոսքով՝ առօրեական մի բան, զուրկ հետաքրքրությունից: Այնինչ, նորույթից պարզվում է, որ անասնակերն ուղարկել են ալյուրի փոխարեն, երկու կողմերին էլ սրտնեղություն պատճառող մի բան, և այս հանգամանքն է, որ շրջանցվել է վերնագրում: Թերևս, կարելի էր փոխել վերնագիրը՝ «ԱՆԱՍՆԱԿԵՐ՝ ԱԼՅՈՒՐԻ ՓՈԽԱՐԵՆ» կամ «ԱՆԱՍՆԱԿԵՐ՝ ՄԵՐԶ-ԱՎՈՐԻՆ» և կամ էլ մնա մի բան:

Անհաջող կարելի է համարել այն վերնագրերը, որոնք հակասում են լրատվությանը: Պրոֆեսիոնալիզմի մասին այստեղ դատելն ավելորդ է, և կարելի է ցավել ուղղակի տրամաբանական սխալի համար:

«ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՈՐԳԵՐԸ ՆԱՎԹԻՆ ԲՆԱՎ ՉԵՆ ՋԻՋՈՒՄ

Գորգերի արտահանությունն անցյալ տարի Իրանին բերեց 1,7 մլրդ դոլարի շահույթ: Այդ եղանակով ստացվող եկամուտը զիջում է միայն նավթի արտահանումից ստացվող եկամուտներին»: Ուշադրություն դարձրեք, վերնագիրը անվերապահորեն պնդում է, որ գորգերը նավթին բնավ չեն զիջում (եկամուտ բերելու իմաստով), իսկ մուտքը հաստատում է, թե գորգերը զիջում են միայն նավթին: Որի՞ն հավատալ:

Լրատվության մեջ ոչ քիչ դեպքերում իրեն զգացնել է տալիս կիրքը, որի չնախատեսված պոռթկումները հազիվ թե ընթերցողին հաշտեցնեն այն մտքին, թե անպատեհ ոգևորությունը համագոր է վարպետության: Այս դեպքերում արդեն կարելի է հանդիպել արտառող կամ ձախողված վերնագրերի: Մի լրատվության մեջ հեզմանքով մկարագրվում է ԱԺՄ հանրահավաքը, որոշ հատվածներ են հիշվում մասնակիցների ելույթներից: Եվ վերնագիրը՝

«ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՀԻՄՆԵԼ ԹԱԳՈՒՀՈՒ ՊՈՍՏ»:

Թե ինչ կապ ունի թագուհու «պոստ հիմները» հանրահավաքի հետ, մնում է լրագրողի մվիրական գաղտնիքը:

Առավել տարածված թերությունը, սակայն, մնում է վերնագրերի պարզունակությունը: Գավառական մակարդակից հազիվ թե բարձր համարվի այսպիսի վերնագիրը, որը փաստորեն հայտարարություն է.

«ԱՊՐԻԼԻ 12-ԻՆ ԿԱՅԱՑԱՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ»: Մի՞թե այդ ժողովում չկար ուշագրավ մի հարց, նորույթ կամ իրողություն, որ արժանի լինեք հիշվելու վերնագրում:

Տարածական ավելի մեղ սահմաններ ունեն այն վերնագրերը, որոնք ամենևին չեն համապատասխանում նորույթի բովանդակությանը և հուշում են այն տխուր եզրակացությունը, որ վերնագրի հեղինակը ամենևին չի կարդացել լրատվությունը:

«...ԵՎ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՅ ԱՆԴՐԵ ԱՂԱՍԻՆ»: Այս վերնագրի ներքո գետեղված նյութի մեջ խոսվում է Արաբկիրի շրջանի №25 ընտրատարածքում սլառզամավորական մի թեկնածուի զրանցման օգտին ստորագրություններ

հավաքելու մասին: Ավելացնենք, որ այդ թեկնածուն ամենևին էլ Անդրե Աղասին կամ նրա ազգականը չէ:

Վերնագրերում նկատելի են մասնագիտական կրթության պակասի հետ առնչվող՝ պատկերավոր մտածողության չարաշահումը, ոչ ճիշտ զուգահեռներն ու մակարերումները:

«37-ի ԾՆՈՒՆԴՆԵՐԻՑ ՄԵԿԸ»: 1937 թվականը մեր գիտակցության մեջ նույնամանի է բռնությունների հետ: Ուստի, անհմատ է այսպես վերնագրել մի լրատվություն, որտեղ խոսքը վերաբերում է ընդամենը այդ թվականին ծնված հանցագործի: Մանավանդ, երբ վերջինիս ծնունդը ոչ մի կապ չունի 1937-ի բռնությունների հետ:

«ԿՈՒՅՐ ԱՉԶԸ ԿՆԵՐԻ, ԿՈՒՅՐ ՄԻՐՏԸ ՉԻ ՆԵՐԻ»:

Հանրահայտ ասացվածք, որ օգտագործել է մահ Մուրացյանը իր «Գևորգ Մարգարետունի» պատմավեպում՝ մեծ կրքերի և հայրենասիրության հակադրության իմաստով: Մակայն, երբ խոսքը վերաբերում է եղբոր ձեռքով քրոջ սպանությանը (քրոջ՝ հաճախակի ուշ տուն գալու պատճառով), ապա մահն վերնագիրը ակնհայտորեն մոտենում է ցինիզմի և գռեհկության:

Ցանկալի չեն երկար վերնագրերը, նախընտրելի են կարճն ու իմաստալիցը, հնչեղը: Երկարաշունչ վերնագիրն արդեն վերնագիր չէ, այլ մեկնաբանություն կամ նկարագրություն, որը տեղին է միայն շարադրանքում: Ամենևին էլ ինքնատիպ չեն հետևյալ վերնագրերը:

«ՑԱՎՈՔ, ԹԱՓԱՌՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԵՆՔ ԽՈՍՈՒՄ, ԶԱՆ ԹԱՓԱՌՈՇՐՁԻԿ ԵՐԵՒԱՆԵՐԻ»

«ՄԵԾԱՍՈՐՈՒՄ ԱԿՏԻՎ ԲԵԿՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՈՒՄ Ե ԱՏՈՍԱԿԱՅԱՆԸ ՎԵՐԱԲԱՅԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԸ»:

Նույն ընդհանուր գնահատականը կարելի է տալ հաջողված վերնագրերին: Դրանք այդպիսին ենք համարում նորույթը թալմ և ինքնատիպ ներկայացնելու, դրա էության մեջ վարպետորեն թափանցելու, հետաքրքիր կողմերից գնահատելու և մահն այլ հատկանիշների շնորհիվ: Հայաստանի մամուլում, որի զարգացման միտումները չի կարելի չնկատել և չարժեքավորել, քիչ չեն մահ հաջողված, նյութը թափանցիկ կամ տեսանելի դարձնող վերնագրերը: Որպես կանոն, այդպիսիք հեռու են խրթնությունից, ձգձգվածությունից, գիտական եզրերի չարաշահումներից, ավելորդ խորհրդավորությունից և այլն:

«ԿԻՆԸ, ՈՐ ՈՒՂ ԵՎԱՐՉԸ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓՈՐՉՈՒՄ ԷՐ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ ԻՐ ԿՈՂՄԸ ՇՐՁԵԼ»:

«ԻՋԵՎԱՆԻ ՇՐՁԱՆՈՒՄ ԼՈՒՄՆԱԽԱՐԱՐԻՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆ ԱՂԻԲԵՋԱՆԵՐԵՆ»:

Կամ՝ միթե հետաքրքիր չեն հետևյալ վերնագրերը:

«ԱՉՔԵՐ ԵՎ ԱԿԱՆՋՆԵՐ ԱԷԿ-Ի ՀԱՄԱՐ»:

«ԸՆՏՐՈՂՆԵՐԸ ԱՅԼԵՎՍ ՃԻՃՈՒ ՉԵՆ ՈՒՆԵՆԱ»:

«ԻՄԻՋԻԱՅԼՈՑ, ԵՐԲ ԾՆՈՂՆԵՐԸ ՍՏԻՊՈՒՄ ԵՆ»:

«ՀԱՅ ԼՐԱԳՐՈՂՆ ՈՒ ԽՐՈՒՇՉԵՎԻ ԿՈՇԻԿԸ»:

7. *Ավարտ*: Կանոնակարգման տեսակետից, թերևս, լրատվության մեջ «ամենաանհմազանդը» ավարտն է, որն ունի ձևերի վիթխարի բազմազանություն: Մակայն հենց այդ բազմազանության համար ընդհանրական են մի քանի ճշմարտություններ: Նախ, ավարտը լրատվության վերջակետն է, որ պետք է դնել ժամանակին: Ավարտը պետք է տպավորիչ լինի, որևէ կերպ օգնի ընթերցողին՝ նյութը պահելու հիշողության մեջ: Այն ամբողջ նյութի օրգանական շարու-

նակությունն է և միաժամանակ վերջը, ճիշտ այնպես, ինչպես վերջին ակորդը լավ երաժշտության մեջ: Հարկ է հիշեցնել, որ լրատվությունը, որքան էլ մտովի բաժանենք ուսումնասիրվող մասերի, իրականում կազմում է մեկ ամբողջություն, որի բաղադրիչներից յուրաքանչյուրն ունի իր դերն ու նշանակությունը: Այս տեսակետից ավարտը ևս ձեռք է բերում հարաբերական ինքնուրույնություն՝ պայմանավորելով լրատվության մատուցման հաջողությունը:

Անհետաքրքիր և ձգձգված ավարտը հասցնում է գորշության, որքան էլ հետաքրքիր լինի նյութը: Ահա մի լրատվություն, որ նվիրված է Շիրազի «Գարնամամուտ» հայտնի ժողովածուին, ասել կուզի՝ բանաստեղծի ստեղծագործական կայացմանը:

Այս տարվա դեկտեմբեր ամսին կլրանա Հովհաննես Շիրազին առաջին անգամ գրական մրցանակ շնորհելու 60-ամյակը, որը նվիրված էր Խորհրդային Հայաստանի 15-ամյակին: Նյութը, ցավոք, պարունակում է միայն «ամյակների» անհեթեթ վիճակագրություն:

Երբ ավարտը չի համապատասխանում լրատվության բովանդակությանը, անընդունելի է, սակայն առավել անընդունելի է, երբ այդպիսի անհամապատասխանությունը վերածվում է հակասության: Նման դեպքերում թվում է, թե լրատվության վերջում լրագրողը փոխել է իր կարծիքը՝ մոռանալով փոխել նաև փաստերը: Մի լրատվության մեջ խիստ քննադատության է ենթարկվում «Ուսանողական գարուն» միջոցառումը՝ կատարվող երգերում «ֆալշ» հնչեցնելը, ամմիտ երգերը, երիտասարդների ոչ քաղաքավարի կեցվածքը, մի խոսքով, լրագրողը տարակուսանք է հայտնում միջոցառման անճարակությունից («ասես գտնվում էի մանկապարտեզում»): Եվ այս ամենին հետևում է զարմանալի ավարտը.

«Կարելի է ասել, որ «Ուսանողական գարուն-95-ը» հաջողված էր»: Ընդ որում, ասված է լուրջ, առանց երգիծելու որևէ մտադրության:

Հերոսամարտիկին նվիրված նյութը հավասարաչափ վարպետությամբ չի գրված, զոմե՝ ավարտը չի բավարարում: Նրան բնութագրող գործերը հիշատակելուն հետևում է ավարտը.

«Գյուլիստանի արծիվը ևս մի քայլ կատարեց դեպի անմահություն»: Շատ անհաջող է, որովհետև կիսանդրին արդեն կայացած անմահության խորհրդանիշն է, և ոչ թե *հերոսի քայլը* դեպի անմահություն: Անճաշակ է արծիվի «քայլ կատարելը». արծիվը սավառնում է, իսկ քայլ կատարում են շախմատ խաղալիս կամ մի այլ տեղ:

Ոչ ճիշտ տվյալներ պարունակող ավարտը ևս արժեզրկում է լրատվությունը, հետևաբար, այդպիսիք նշելիս անհրաժեշտ է համոզված լինել ստուգության մեջ.

«Շախմատի աշխարհի առաջնությունների 100 տարվա պատմության ընթացքում առաջին դեպքն է, որ աշխարհի առաջնության մրցախաղը կարող է տեղի ունենալ աֆրիկյան մայրցամաքում»:

Նշված տողերը գրվել են 1995թ., իսկ շախմատի աշխարհի առաջին առաջնությունը տեղի է ունեցել 1886թ., ուրեմն, այդ առաջնությունները արդեն ունեին ոչ թե 100, այլ 109 տարվա պատմություն:

Գիտության և տեխնիկայի բնագավառի, քաղաքագիտական եզրերին անձանոթ կամ ոչ իրազեկ լինելը լրատվությունը կարող է թոթովանք դարձնել՝ իր անլրջության պատճառով: Բավական բարեխղճորեն շարադրված մի լրատվության մեջ՝ Հայաստանի ատոմակայանի վերագործարկման կապակ-

ցութեամբ. նշվում է, որ հարկ եղած դեպքում կձեռնարկվեն միջոցառումներ՝ «եւաւական բնակչության հնարավոր էվակուացիայի հետ»: Եվ ավարտը՝
«Հուսով ենք, որ այս միջոցառումները խուճապ չեն առաջացնի... իսկ միջուկային տերություն լինելը ոչ միայն պատվարներ է, այլև պարտավորեց-նող»:

Բայց ատոմակայան ունենալը դեռևս չի նշանակում միջուկային տերություն լինել: Ավելի պարտավորեցնողը, տվյալ դեպքում, իրազեկ լինելն է: Ավարտում, ինչպես և լրատվության ցանկացած բաղադրամասում, միանգամայն ավելորդ են պաթետիկան, անտեղի ու կեղծ ռոմանտիկան և ճոճաբան դարձվածը: Ահա Հեմինգուեյին նվիրված մի թղթակցության ավարտը.

«Նրա անունը, ում աճեցրած բարալի սեզմից (թերևս՝ բարալիկ սեզից-Ա. Խ.), ճշմարտության անտառն է ակունքվել»: Մի՞թե կարելի է պատկերաց-նել «ճշմարտության անտառ», որը դեռ իր հերթին կարող է «ակունքվել»: Չէ՞ որ այս ամենը անհեթեթություն է: Ակունքվելու (կասկածելի և անճաշակ բայ, ինչպես «բռնացրվել» միտինգային բառը) դեպքում խոսքը պետք է լիներ գոնե աղբյուրի կամ գետի մասին:

Լրատվության ավարտը կարող է լինել անսպասելի, որ պետք է բոլոր դեպքերում հիմնավորված լինի մյուսի բնութով, չափի զգացումով և արդեն տրված տեղեկությունը ընթերցողի հիշողության մեջ ամրապնդելու նպատա-կով:

8. *Նյութի քարմություն:* Լրատվության արդիականությունը կամ ինչպես ընդունված է ասել՝ հրատապությունը նրա քարմության մեջ է: Ուշացած լրա-տվությունը հիշեցնում է տոմս գնելու գործողությունը այն ժամանակ, երբ գնացքն արդեն մեկնել է: Այն անգոր է այլևս ընթերցողին վերադարձնելու ի-րադարձությունների արդիական ընթացքին, հետ է պսիում նրան այդ իրա-դարձությունների համաժամանակյա կամ կարդալու պահին մոտիկ հոսքից: Ժամանակակից լրագրության մեջ նորույթը կարող է հնամալ աներևակայելի արագությամբ, եթե նկատի ունենանք ռադիոյի և հեռուստացույցի ահեղ մրցակցությունը, որ դրանք ի հայտ են բերում լրատվություն հաղորդելու իրենց հաճախականության և առհասարակ լուրերը ժամանակին ընդունելու ու տա-րածելու անհամեմատ լայն հնարավորությունների շնորհիվ: Այս պատճառով էլ մամուլին մնում է իր կարելիությունների լավագույն տարբերակը՝ հաղորդել ամենավերջին լրատվությունը, որ մատչելի է իրեն: Չանգվածային լրատ-վության մյուս միջոցների համեմատությամբ որոշ հապաղումը, սակայն, մամուլին տալիս է մի հայտնի առավելություն՝ ճշգրտել լրատվությունը արդեն հայտնիի հիման վրա, ինչպես և առավել սթափ ու մտածված գնահատել այն:

Կա հնացած լրատվության տեսակ, որն իրեն մատնում է արդեն ժամա-նակի բացահայտ հակասականությամբ՝ նորույթը ներկայացվում է իբրև ա-պառնի, այն հաղորդելուց հետո իրականանալիք մի բան, բայց հաղորդման ժամանակի պարզ ընկալումն իսկ ցույց է տալիս, որ այն իրականում արդեն անցյալ է: Թերթերից մեկը 1995թ. մայիսի 2-ին գրում է. *«...Կառուցվեց բոլորո-վին նոր կամուրջ, որը հանդիսավոր պայմաններում շահագործման կհանձ-նվի մայիսի 1-ին»:*

Եթե ինչ-որ տեղ արտասահմանյան նորույթի հաղորդման հապաղումը ներելի կարելի է համարել, ապա հազիվ թե հանդուրժելի է տեղական լուրի ու-շացումը, ինչի օրինակը տեսանք վերը: Թարմությունը կորցրած լուրերի տպագրությունը տարածված է Հայաստանի շատ պարբերականներում: Թեր-

թերի համար սովորական բան է դարձել լրատվությունը հաղորդել օրեր, նույնիսկ շաբաթներ հետո:

Ուշագած լրատվությունը, հասկանալի պատճառներով, աչքի է զարնում օրաթերթերում, բնականաբար, գաղտնի չմնալով մահ իրենց՝ լրագրողներին: Ուստի, թարմությունից զուրկ նորույթը թերթերը ձգտում են նորոգել «վերջերս», «արդեն հաղորդվել է», «ինչպես հայտնի է» և մնան արտահայտություններով, որոնք ստեղծում են նորույթի կամ դրա ուշ հաղորդումը հիմնավորելու պատրանք:

Հավաստիության տեսակետից կասկածելի է թվում այն լրատվությունը, որը թեև թարմ է, որի մասին, սակայն, խոսվում է ապառնի ժամանակով:

Ցանկալի և ավելի ճիշտ կլիներ, եթե հետևյալ լուրը ներկայացվեր անցյալ ժամանակով: Թերթերից մեկը գրում է մայիսի 27-ին.

«Մայիսի 26-27-ին Երևանում «Արալեզր» կկազմակերպվի շների մրցույթ»:

Մայիսի 27-ին չի կարելի գրել, թե «մայիսի 26-27-ին կկազմակերպվի», որովհետև երեկվա մասին ապառնիով չեն գրում: Նպատակահարմար է թվում՝

«Մայիսի 26-ին Երևանում «Արալեզր» կազմակերպել է շների մրցույթ, որը կշարունակվի այսօր»:

Հազիվ թե ընդունելի լինի այն ուշագած լրատվությունը, որի մուտքը սկսվում է ներկա ժամանակով: Այս դեպքում մուտքին հետևող և ժամանակ ցույց տվող տվյալը ինքնաբերաբար հերքում է մուտքի արժանահավատությունը կամ դրա անվերապահ բնույթը: Ահա ապրիլի 22-ի մի լրատվություն.

«Երիտասարդական Ակադեմիա հասարակական կազմակերպությունը շարունակում է սեփականաշնորհմանը նվիրված տնտեսագիտական միջոցառումների շարքը: Ապրիլի 8-ին կայացավ շարքի երրորդ հանդիպումը»: Թերևս ձևակերպվել այլ կերպ՝ վերը հիշված հակասությունը վերացնելու համար:

«Ապրիլի 8-ին կայացել է Երիտասարդական Ակադեմիա հասարակական կազմակերպության՝ սեփականաշնորհմանը նվիրված տնտեսագիտական միջոցառումների շարքի հերթական հանդիպումը»:

Նյութը, անշուշտ, կկորցնեք թարմության պատրանքը, բայց չէ որ ճշմարտությունն ավելի լավ է, քան ցանկացած պատրանքը, զոհե, լրագրության մեջ: Թարմությունը կորցրած լրատվությունը ինքնին սպառած է լինում ժանրին հատուկ ժամկետը: Այս պատճառով նպատակահարմար է թվում նյութը ներկայանել ոչ թե նորույթի, այլ ավելի ընդարձակ՝ թղթակցության կամ հոլովածի ձևով, որտեղ նյութը հավակնություն չի ունենա թարմ լրատվություն ներկայացնելու, բայց փոխարենը կհագեցվի նկարագրական կամ վերլուծական հետաքրքիր հատկանիշներով:

9. *Ստուգություն:* Ստուգությունը կամ ճշգրտությունը լրատվության հավաստիության անհրաժեշտ նախապայմանն է: Լրատվությանը մեկ անգամ անճշտության մեջ կասկածող, էլ չենք ասում՝ այդ անճշտության մեջ համոզված ընթերցողը հազիվ թե հավատ ընծայի ոչ արժանահավատ թերթին:

Լրատվության ստուգությունը ամենից առաջ վերաբերում է փաստերին, իրողություններին, դրանք ընդգրկող ժամանակին, այնուհետև դրանցից բխող մեկնաբանություններին, լրագրողի իրազեկությանը, նյութի իմացությանը և այլն: Պակաս կարևոր չէ մահ շարադրանքի միասնականությունը՝ տրամաբանական իմաստով, դրա ոչ հակասականությունը: Հատուկ պետք է զգուշանալ չափազանց գայթակղիչ, բայց և փաստերից չբխող հապշտապ եզրակացություններից կամ կանխատեսումներից, որոնց անվերապահ բնույթը կարող է ստվեր գցել թերթի հեղինակության վրա: Այսպիսի գաթակղությանը լրագ-

բողոքները երբեմն չեն կարողանում դիմանալ այն դեպքերում, երբ փաստը կամ իրողությունը հասարակական սուր հետաքրքրություն է ներկայացնում: Ավելի լուրջ է ասել, որ հրապուրիչ, բայց և չստուգված լրատվությունը ուշադրություն կարող է նվաճել շատ կարճ ժամանակ:

Լրատվության ոչ ստուգությունը, գոնե այսօրվա մեր մամուլում, կապվում է նյութի ոչ բավարար իմացության հետ: Հակառակ դեպքում չէր հայտնվի այսպիսի շարադրանք.

«1995թ. ապրիլի 4-ը, հիբրավի, պատմական օր էր հայ ժողովրդի հոգևոր կյանքում: Այդ օրը հայոց մայր եկեղեցու զանգերը 131-րդ անգամ ղողանջեցին ի փառս Հայոց նոր Հայրապետի օծման»: Եվ քիչ անց՝ «Հայոց վեհափառն օծվեց Գարեգին Ա անվամբ»:

Բայց ապրիլի 4-ին կաթողիկոսն ընտրվել է, և ոչ թե օծվել: Նախ կատարվում է ընտրությունը և ապա՝ օծումը: Իսկ օծումը կատարվել է ընտրությունից հինգ օր անց, ապրիլի 9-ին:

Լրագրության մեջ մերժելի պաթետիկայի հետ սերտ հարևանություն է անում զգացմունքների գերիշխումը բանականության նկատմամբ, որը կարող է ստվերել լրատվության բովանդակությունը: Այդպիսի ստվերարկումից առավել, թերևս, իրեն զգացնել է տալիս անկեղծության պակասը հետևյալ տողերում:

«Հրաժեշտն այրբենարանին, որ դեռ անցած տարվա հոկտեմբերին պիտի կայանար, սակայն, հետաձգվեց ցուրտ ձմռան, ցուրտ դահլիճի և ցրտի հետ առնչվող այլ պատճառներով: Եվ լավ է, որ հետաձգվեց, որովհետև մեր փոքրիկների առաջին տոնը արևոտ ու տաք պիտի լիներ»: Ավանդաբար այրբենարանի տոնը նշվել է հոկտեմբերին, երբ կարող էր, իրոք, վրա հասած լինել ցուրտ ձմեռը, բայց և տաք դահլիճներում: Տոնի հետաձգում ապրիլին՝ պարտադրված էր սոցիալական կամ էներգետիկ տխուր պայմաններով, որն ակնարկելն ավելի անկեղծ կլիներ, քան արհեստական, շինծու մխիթարանքը:

Լրատվության, դրա կառուցվածքի, տարրերի ոչ միօրինակությունը չի նպաստում լուրի հավաստիությանը: Եթե տպագրվում են մի խումբ մարդկանց կարծիքները, ընդամին, նշելով նրանց անուն-ազգանունները և զբաղմունքը, այսինքն՝ կարծիքի տերերը իրական անձինք են, ապա նրանցից ոչ մեկի համար բացառություն անել չի կարելի: Մի լրատվության մեջ նշվում է յոթ մարդու՝ սահմանադրության մասին ունեցած կարծիքը, որոնցից վեցինը՝ վերը նշված տվյալներով: Միայն մեկն է ցանկացել անհայտ մնալ, չուզենալով, սակայն, անհայտ պահել իր կարծիքը և գոեհկությունը.

«Ինչ հիմար հարց է՝ «այո» եմ ասելու սահմանադրությանը, թե «ոչ»: Միրելիս, ընտանիքում ինչպես է. վեր ենք կենում և ասում, թե պապ ու տատ, հայր ու մայր, ձեր տատ-պապությունը, ձեր հեր-մերությունը դենը տարեք ու մենք՝ ամեն մեկս մեր ձևով կառավարվենք: Չեղավ չէ՞»:

«Ջղային մի անցորդ»:

Եթե «Ջղայինը» չի ցանկացել ներկայանալ, ապա հազիվ թե կարիք կար նրա կարծիքը վկայակոչել մյուս՝ ոչ զաղտնապահ ու ոչ ջղային մարդկանց հետ միասին: Ժանրի այսպիսի ձևախախտում, թերևս, կարող էր իրեն թույլ տալ միայն հեռուստատեսությունը, որովհետև այստեղ անձի տվյալներին, այսինքն՝ նրա իրական լինելու վկայությանը կարող էր փոխարինել էկրանում ցուցադրվելը:

Ստուգության պակասը երբեմն քողարկելու համար գործի է դրվում անորոշությունը: Այս դեպքում անորոշությունն ինքն է հավակնում ստուգության. *«Այսպիսով, պատանդների թվաքանակը հասավ 250-ի սահմանները»:*

Նման դեպքերում պետք է ճշգրիտ լինել՝ կամ «*հասավ 250-ի»*, և կամ էլ՝ պարզապես նշել 250-ին մոտիկ թիվը:

Անորոշությունը, սակայն, կարող է ավելին անել՝ ոչնչի հավասարեցնել լրատվությունը, նրա ամբողջ ստուգությունը, փոխարինելով անհրաժեշտ փաստին կամ տվյալին:

«ՀԱՅԴԵ ՓԱՐԻՉ

Այս մասին (ինչի՞ մասին: Ենթադրվում է, որ ընթերցողը ինքը պետք է կռահի, որ խոսքը Փարիզ փախչելու մասին է-Ա.Խ.) Նոյյան տապան գործակալության թղթակցին է հայտնել կուսակցության (ԽՊԿ կուսակցության-Ա.Խ.) քարտուղար Անահիտ Վարդումյանը: Նախկինում գործակալության տարածած լրատվություններից մեկում արդեն հաղորդվել էր Ա.Վարդումյանի հայտարարությունն այն մասին, որ ՀՀ Արդարադատության նախարարությունում գրանցված հիշյալ կուսակցության ղեկավար է գրանցվել ոմն Զ.Եսայանին» (բնագիրը մեջբերվում է բառացիորեն):

Այդպես էլ անհայտ է մնում, թե այդ կուսակցությունից ով է փախել Փարիզ և ո՞ր կուսակցության մասին է խոսքը:

Լրատվության ստուգության, փաստերի ճիշտ գնահատման ու վկայակոչման հիմքում միշտ ընկած է լինում լրագրողի բարեխղճությունն ու նյութին ծանոթանալու աշխատանքը: Այս տեսակետից ուշագրավ է մի հանգամանք. թերևս, լրագրողներից ամենից շատ բողոքում են գիտաշխատողները, ե այդ ինչ-որ չափով հասկանալի է: Գիտական նյութին լրագրողը մոտենում է ոչ պրոֆեսիոնալ, գուտ սիրողական մակարդակով: Քիչ չի պատահում, որ այս բնույթի նյութը լրագրողը փորձում է յուրացնել մեկ հարվածով՝ լրատվության մեջ գործի դնելով գիտական հասկացություններ, եզրեր և այլն: Նույնիսկ չմտածելով, որ հարկ եղած չափով չի թափանցել դրանց բովանդակության մեջ: Եվ սա է, որ չի կարող գոհացնել գիտաշխատողին կամ գիտությանը: Գիտական նյութը նպատակահարմար է մատուցել ըստ հնարավորին հանրամատչելի, ճիշտ և պարզ ոճով՝ խուսափելով գիտական արժեք ունեցող բառակապակցությունների ու եզրերի գործածությունից, այդպիսիք գործի դնելով միայն խիստ անհրաժեշտ դեպքերում և ժխտորեն: Համոզված եղեք, որ «միջին» ընթերցողը հազիվ թե լրագրում կարդա գիտական տեքստին մատեցող որևէ շարադրանք: Ոչ պակաս կարևոր է՝ մնան դեպքերում սեփական մեկնաբանություններից խուսափելը:

Պատմական իրողություններ, փաստեր և տվյալներ, անուններ և անձնանուններ հիշելիս լրագրողը միշտ աչքի առջև պետք է ունենա լրատվության ստուգության սկզբունքը: Արդեն վատ հիշվող կարդացածը, մանավանդ կողմնակի աղբյուրներից ստացած իմացությունը, կարիք ունի ստուգման կամ լրացման՝ հավաստի գրականությամբ: Արժեք հիշել, որ անճշտ փաստեր և տվյալներ օգտագործելով՝ լրագրողը ՁԼ միջոցներով կարող է սխալ լրատվություն տարածել *բազմաթիվ ընթերցողների մեջ*: Հակառակ դեպքում, եթե փաստը հնարավոր չէ ստուգել (ժամանակի սղություն, համապատասխան գրականության բացակայություն), ճիշտ կլինեք հրաժարվել ցանկացած պատմական էքսկուրսից կամ փաստի կոնկրետ հիշատակումից: Լավ է ոչինչ չտալ, քան կեղծը տալ: Ահա ևս այդպիսի մի օրինակ:

«1917թ. բուսական չորրորդ Պետական դումայի նիստում քննարկումների ժամանակ դահլիճ մտավ Դումայի պահակագործը և հայտարարեց. «Պահակագործը հոգնել է, պարոնայք»:

Շփոթված են և թվականը, և իրողությունները: Խոսքը վերաբերում է ոչ թե Պետական Դումայի, այլ Սահմանադիր ժողովի նիստին, որը տեղի է ունեցել 1918թ. հունվարի 18-ին: Նիստը փակվել է ոչ թե պահակագործի հայտարարությամբ, այլ նավաստի Ժելեզնյակի, որը և արտասանել է հիշյալ դարձվածը:

Ահա անգլիական «Էկոնոմիստի» էջերից թարգմանված մի գրախոսական՝ Վոլկոզոնովի գրքի վերաբերյալ.

«Բոլշևիկների ստեղծած Սահմանադիր ժողովի քայքայմանը նվիրված հեղինակի նկարագրությունը ուղղակի ցնցող է»: Ընդհակառակը, բոլշևիկները երբևէ Սահմանադիր ժողով չեն ստեղծել, այլ առհավետ ցրել են այն: Հազիվ թե անգլիական լուրջ հրատարակությունը այսպիսի ցրվածություն թույլ տար: Պետք է լիներ՝

«Սահմանադիր ժողովը ցրելուն ուղղված՝ բոլշևիկների գործողությունների նկարագրությունը ուղղակի ցնցող է» կամ նման մի բան:

Ստուգության կարևոր հատկանիշներից է գործողության կատարման տեղի մատնանշումը: Առանց ժամանակի և տեղի հստակ մատնանշման, լուրը դառնում է առարկայագուրկ՝ կտրված ժամանակից և տարածությունից:

«Շուրջ երկշաբաթյա արյունահեղ մարտերից հետո կառավարական գործերը և իսլամական ընդդիմության զինված խմբավորումները ամրապնդվեցին իրենց զբաղեցրած դիրքերում: Նրանց միմյանցից բաժանում է ընդամենը 15կմ... Այսպես ասած, ակամա զինադադարի գլխավոր պատճառը կլիմայական բարդ պայմաններն են»: Որտե՞ղ են ընթանում այդ մարտերը, երբ են իրենց զգացնել տվել «կլիմայական բարդ պայմանները»՝ լրատվության մեջ այդ մասին ոչինչ չի ասվում:

Լրատվության ստուգությունը կարող է խաթարվել ազգանունների և տեղանունների կամ առհասարակ անունների ոչ ճիշտ գործածության դեպքում: Թերթերից մեկում Կ. Պոլսի հայոց նախկին պատրիարք Գ. արք. Գազանճյանը հիշվում է Գայաջյան ձևով: «Գեղասահորդներն ավարտեցին մրցավեճը» վերնագրի ներքո կարդում ենք. «Առաստառացի Իրինա Տունկայային հաջողվեց ճանաչվել... ուժեղագույնը»: Ճիշտ չեն ոչ անունը, ոչ էլ ազգանունը. խոսքը վերաբերում է 1996թ. կամանգ գեղասահքի Եվրոպայի չեմպիոն Ելենա Սլուցկայային:

Ստուգության դեմ այսպիսի մեղանշումները թվում են վրիպակներ, սակայն դրանցով այնքան առատ են թերթերը, որ ժամանակն է լուրջ ուշադրություն դարձնել դրանց:

Ստուգությունը փաստորեն այն հենքն է, որին խարսխվում են նորույթի հիմնական մանրամասները՝ *ինչը, ով, երբը, որտեղը* և *ինչպեսը*: Դրանցից որևէ մեկի խախտումը արժեզրկում է ամբողջ լրատվությունը, այն դարձնելով ոչ արժանահավատ: Լրատվական շարադրանքը համոզիչ է հնչում հասկացությունների միօրինակացման, նույնականությունը պահպանելու դեպքում, երբ այդ հասկացությունները հարկ է լինում հիշել մեկից ավելի անգամ: Ստուգությունը սերտ կապ ունի լրատվության տրամաբանական ընթացքի, դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը պարզ և ընկալելի դարձնելու հետ: Բնականաբար, այս դեպքում նորույթի արժանահավատությունը շփման բազմաթիվ եզրեր է հայտարարում լրագրական վարպետության ու լեզվական իմացության հետ:

10. *Հմտություն*: Լրատվության բովանդակությունն անպայմանորեն ամփոփվում է նրա նպատակահարմար կառուցվածքի մեջ: Այդ կառուցվածքը, ի

վերջո, լրագրողի անհատական մոտեցման արդյունքն է: Բացառությամբ մի քանի ընդհանուր սկզբունքների, թերևս, արհեստական կլիներ առաջարկել լրատվության մեկընդմիշտ տրված կառուցվածք, որ բավարարեր այդ ժանրի բոլոր պահանջները կամ այդ ժանրով զորոգ բոլոր լրագրողներին: Նշենք որոշ գործադրելի մոտեցումներ, որոնք իրենց կոնկրետության մեջ ևս, անշուշտ, կկրեն լրագրողի անհատականության կնիքը:

Շատ կարևոր է խոսքի ճիշտ կառուցումը: Ամեն ինչ միանգամից ասել-վերջացնելու գաթակոթությունից առավել աչքի առաջ պետք է ունենալ լուրի կամ նորությունի էական կողմը հաղորդելու խնդիրը: Կարելի է միանգամից հաղորդել կարևորը, իսկ երկրորդականը, կարևորը լրացնող կողմերը (մանրամասներ, զուգահեռներ և այլն) թողնել լրատվության միջին կամ վերջին մասերում: Կարելի է սկսել նաև հակառակ հերթականությամբ՝ երկրորդական (բայց միշտ հետաքրքրական և ուշագրավ) կողմը անցում ծառայեցնելով էականի համար և այլն: Լրատվության բոլոր մասերը տրամաբանորեն կապվում են միմյանց հետ, նպաստում այն բանին, որ լուրը հասկանալի, հետաքրքրաշարժ մատուցմամբ յուրացվի ընթերցողի կողմից:

Լրատվության մեջ աններելի շռայլություն է թվում նույն աղբյուրի՝ մեկից ավելի անգամ վկայակոչումը: Դրանից պետք է խուսափել, ինչպես և այն հնարանքից, երբ աղբյուրի բացակայության դեպքում նշվում է. «ինչպես պարզվեց հավաստի աղբյուրներից», «արժանահավատ աղբյուրները հաղորդում են» և օղից կախված նման անլուրջ վկայակոչումներից: Ինչ վերաբերում է կրկնությանը, ապա այն սովորելու դեպքում հանդես է գալիս որպես իմացության մայր, իսկ լրատվության մեջ նմանվում է պարզապես շաղակրատ հարևանուհու:

«Երևան 1 փետրվար, Արմենպրես: ՀՀ ԱԳՆ հյուպատոսա-իրավական բաժնից ստացված տեղեկատվությունից ելնելով, Արմենպրեսը հաղորդել էր, որ Հայաստանում գործող օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչություններից հյուպատոսական ծառայություններ ունեն յոթը»: Արմենպրեսից հետո ավելորդ էր հիշել նրա աղբյուրը, դա արդեն իր՝ Արմենպրեսի խոհանոցն է:

Մամուլում քիչ չեն պատահում լրատվության տարրական սկզբունքներին հակասող կրկնությունները, և թվում է, թե նյութը տպագրության է հանձնվել անմշակ, ուղղակի տվյալ հիմնարկի որոշման արձանագրության նախնական տեսքով: Լրատվությունը սեղմ կառույց է, այն չպետք է թողնի «սպիտակ կետեր»՝ անհասկանալի լինի կամ առաջադրի այնպիսի հարցեր, որոնց պատասխանը անհրաժեշտ էր տալ: Նման դեպքերում քիչ չի պատահում, որ անպատասխան մնացած հարցերը կասկածի տակ են առնում լրատվության ամբողջականությունը, որովհետև հենց դրանք են կազմում լրատվության բովանդակությունը: Ուշադրություն դարձրեք հետևյալ լրատվությանը.

«Պոլսի ս. Ստեփանոս եկեղեցում կայացած արարողության ժամանակ, որին մասնակցել է Գարեգին պատրիարքը, քաղական խորհրդի ատենապետ Հ. Կարապետյանը հայտնել է այն մասին, որ Եշիլ-գյուղին պատկանող 4 կալվածքներից երկուսը, որոնց 43 տոկոսի բաժինը միայն եկեղեցուն էր, վաճառվել է պետական որոշմամբ»:

Այս շարադրանքի մեջ նշվում է միայն փաստը, սակայն անտեսվում է փաստի տրամաբանությունը: Արդյոք այդ կալվածքները վաճառվել են պետության փոխհատուցումով, թե առանց դրա, պատրիարքարանի գիտությամբ, թե

նրան պարտադրելով: Այս կարևոր հարցերի պատասխանը չի տրվում: Ի դեպ, լրատվության վերնագիրն է՝ *«Հաճառվել են եկեղեցապատկան հողեր»*, բայց տեքստում խոսվում է *կալվածքների* մասին: Ակներև է, որ լրատվությունը վերցված է Մտամբուլի թերթերից (արևմտահայերեն): Բայց Հայաստանի լրագրողը, մեքենաբար գործածելով «կալվածքներ» բառը, անտեսել է, որ այն արևելահայերենում ունի զուտ հողային սեփականության իմաստ, իսկ արևմտահայերենում՝ «կալվածներ» ձևով, առհասարակ սեփականության (տներ, հողեր, խանութներ, շինություններ և այլն): Այս դեպքում վերնագիրը ևս կասկած է հարուցում. պետք է լիներ՝ *«Հաճառվել է եկեղեցապատկան սեփականություն»*:

Լրատվության հաջողությունը մեծ չափերով կախված է նյութի թաքմ, ինքնատիպ, պարզ ու հասկանալի շարադրանքից: Վերացականության ու կաղապարների, գունաթափ ու մաշված դարձվածների հաղթահարումը ինքնին խոսում է լրագրողի հմտության մասին: Հայերենը ունի բավականաչափ հարուստ ու ճկուն լրագրային լեզու՝ հանրածանոթ ցանկացած դարձված այլ կերպ, այլ տարբերակներով արտահայտելու համար: Նույնը վերաբերում է նաև ռժին, ռժի պարզությանը: Ինչ տպավորություն կարելի է ստանալ հետևյալ վերացական ու ջղածիգ լրատվությունից.

«Շափարշ Զոյարյանի ու կոնֆերանսիեի՝ Արամ Մարգսյանի ֆունկցիաները շղարշված էին ցաքուցրիվությամբ, վերջինս էլ ընդելուզված էր շոշափելի տազնապով՝ դեպի իրենց կողմից ակնկալվող սաղրանքներն ու դրանց հետևելիք քաղաքացիական պատերազմը»:

Վատ ճաշակը և հմտության պակասը ևս ծնում են դարձվածամոլություն և ոչինչ չստող բառերի շարան.

«Համառոտակի ներկայացնելով հանրապետության ներկա սոցիալ-տնտեսական վիճակը և ներտնտեսական քաղաքականության իրականացման, տնտեսական առաջխաղացման միտումները, պետնախարարը ընդգծեց այն միջոցառումների նպատակայնությունը, որ հանրապետության ղեկավարությունը ձեռնարկում է տնտեսական սկսված աշխուժացումն անվերապահորեն արագացնելու համար»:

Կարելի էր ազատվել ավելորդություններից.

«Պետնախարարը ներկայացրեց հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը՝ նշելով նաև տնտեսական առաջխաղացման որոշ միտումները, որոնց զարգացմանն է հետամտում հանրապետության ղեկավարությունը»:

Իշխանամետ լեզուն գրեթե միշտ շատ ավելի բառեր է պարունակում, քան միտք, ուստի լրատվության մեջ ցանկալի է լրիվ ազատագրվել դրա կաղապարներից:

«Իսկ մեր այն հարցին, թե որքանով է այդ ծրագիրը իրականանալի, շրջգործկոմի աշխատակիցը պատասխանեց, որ *կառավարությունում մնան հեռանկարի իրականացման հարյուր տոկոսանոց հնարավորություն է վերապահվում*»: Ահա շրջգործկոմի աշխատակից, որ չունի իր կարծիքը, ահա լրատվություն, որ գրեթե ոչինչ չի պարունակում:

Հին կաղապարների վերապրուկներից է լրատվության մեջ հաստատուն տեղ գտած՝ պաշտոնյաների հիշատակումը անուն առ անուն: Պաշտոնական անձանց անպայման հիշատակելու ձգտումը երբեմն զավեշտական կացութային մեջ է դնում լրատվությունը, որտեղ, ի վերա այսր ամենայնի, չի փայլում հայերենի իմացությունը.

«ԲԱՅՎԵՑ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԴԱՀԼԻՃԸ

Օրերս Իջևանի երաժշտական դպրոցի համերգային դահլիճի բացման կապակցությամբ արված դասական երաժշտության *մենահամերգին իրենց մասնակցությունն էին բերել մասնակցության նախարար Հակոբ Մոսիսյանը և փոխնախարար Ստեփան Լուսինյանը*։ Նրանք ուշադրությամբ ունկնդրեցին...»։ Ոչ թե «մենահամերգին իրենց մասնակցությունն էին բերել», այլ «ներկա էին»։

Ցանկացած փաստի վերաբերյալ լրագրողի խորհրդածությունները պետք է ներկայացնեն իրողությունը ամենատարբեր կողմերից, գնահատեն ըստ հնարավորին տեսանկյունի և պարզ։ Մամուլում, մինչդեռ, քիչ չեն քմահաճ, և այդ պատճառով անհասկանալի դատողությունները որևէ փաստի վերաբերյալ։ Ահա «մամուլի միջազգային օրվան նվիրված» մի նյութ, որ բերում ենք ստորև.

«Ուրեմն, այսօր մամուլի միջազգային օրն է։ Նաև՝ մամուլի *միջին ազգային* մամուլի օրը։ Նաև մեր օրն է»։

Եթե լրագրողը ցանկացել է երգիծել խորհրդային մամուլի օրը, ապա, պետք է ասել, որ այդ երգիծանքը նրան չի հաջողվել։ Առհասարակ, լրատվության մեջ ցանկալի է երգիծանքի կիրառումը, պայմանով, որ լրագրողը գուրկ չլինի հումորի զգացումից։ Դիպուկ ծաղրը տպավորիչ է և մնում է հիշողության մեջ։ Այնինչ, անհաջող երգիծանքը փչացնում է ամբողջ լրատվությունը՝ իր տափակության մեջ ոչնչացնելով լրատվության անկեղծությունն ու հավաստիությունը։

Գրեթե նույնը կարելի է ասել լրատվության մեջ *պատկերավորման միջոցների գործածության վերաբերյալ*։ Այստեղ ամենից առաջ հարկավոր է չափի զգացում։ Նյութը պետք չէ խճողել ավելորդ պատկերավորությամբ, որը շեղում է ուշադրությունը։

«Հակադիր ճամբարներում գտնվող քաղաքական գործիչները՝ հաճախ խուսափելով ուղիղ և սկզբունքային բանավեճից, ջանասիրաբար իրար վրա «քսի» են տալիս իրենց կողմից վերահսկվող և կիսավերահսկվող թերթերը՝ հանդիսատեսի կարգավիճակով դիտելով իրենց համար հաճելի «աքլորակռիվը»։ Բայց «քսի տալու» հետևանքը կարող է լինել զգվռտոցը և ոչ երբեք «աքլորակռիվը»։ Պատկերավոր մտածողությունը այստեղ չի կայացել։

11. *Բառ և նախադասություն*։ Փոքր ծավալ ենթադրող լրատվությունը չափազանց զգայուն է բառերի նկատմամբ։ Հայերենի վիթխարի բառապաշարը ցանկացած լրագրողի տալիս է ընտրության հնարավորություն, և այս դեպքում, պարզ է, նախընտրելի են տվյալ իրողությունը կամ հասկացությունը ըստ ամենայնի արտահայտող բառերը։ Հիրավի, լրատվության մեջ յուրաքանչյուր բառ պետք է իր տեղում լինի, և այնուհետև, գործածվի համընդհանուր ճանաչում գտած իմաստով։ Եթե գեղարվեստական գրականության մեջ ստեղծագործողը համեմատաբար ազատ է այս կամ այն բառի մեջ նոր իմաստ դնելու կամ նոր երանգ տալու տեսակետից, ապա լրագրության մեջ այդպիսի ազատությունը, կարծում ենք, պետք է բացառվի։ Միջին կարգի ընթերցողը դժվարությամբ կարող է ընկալել առաջարկվող իմաստային ամեն մի փոփոխություն, դա նրան կարծեմա լրացուցիչ ջանքեր և ժամանակ, իսկ սրանցից և մեկը, և մյուսը լրատվության քննամիներն են։ Անշուշտ լրագրողը ձգտում է բառերի ազատ ընտրության, մասնավորապես՝ նոր հասկացություններին համապատասխան նոր բառեր որոնելուն կամ ստեղծելուն։ Դա հասկանալի և խրախուսելի գործընթաց է, բայց այստեղ ծառանում է ձևը՝ *ինչպես*։ Բայց և մեկ, և մյուս

դեպքերում անհրաժեշտ են լեզվական պատշաճ գիտելիքներ և իմացություն, ինչպես և նուրբ լեզվագագացողություն, որից ի դեպ, զուրկ կարող են լինել նույնիսկ բավական գրագետ մարդիկ: Մինչդեռ, մեր լրագրողներից շատերը չունեն նույնիսկ մասնագիտական կրթություն: Պատահական չէ, որ մամուլում աչքի են զարնում բառերի սխալ կամ ավելորդ կիրառությունները, քմահաճ իմաստավորումները և այլն: Դրանք ոչ պրոֆեսիոնալիզմի արդյունք են:

Աչքի են ընկնում, և ամենից շատ, բառերի ոչ ճիշտ, նույնիսկ հակառակ իմաստով գործածությունները: Այսպես շատ տարածված, քերթերում հանապազօրյա հաց հիշեցնող *«համարել»* բայի կիրառությունը՝ *«կարծել»* բայի փոխարեն:

«Աղջկա ծնողները *համարում են*, որ նա ճիշտ է վարվել»: «Ինչպես որ *համարում են* մեր պառլամենտի կոմունիստները»: «Համարել» բայը ներգործական սեռի է, որը միշտ լրացում է պահանջում (*համարել ի՞նչ*, *համարել ճիշտ*, *սխալ*, *քշմամի*, *բարեկամ* և այլն): *Կարծել* բայը, մինչդեռ, չեզոք սեռ ունի և լրացում չի պահանջում. այն ոչ մի դեպքում չի կարելի շփոթել *«համարել»*-ի հետ: Անկախ կիրառությունից, այս երկու բայերի միջև կա իմաստային որոշակի տարբերություն: Պետք է լիներ՝

«Աղջկա ծնողները *կարծում են...*»:

«Ինչպես *կարծում են...*»:

Բառերի ոչ ճիշտ գործածությունը մատնում է նաև ոչ հայերեն մտածողությունը.

«Աերտոն Սեննայի *շիրիմը...* ամեն օր հազարավոր երկրպագուներ է *ընդունում*»: Թույլ տվեք, միթե *շիրիմը* նախարարական կամ մարզպետական ընդունարան է, որ ընդունի մարդկանց:

Պետք է խմբագրվեր՝ «*շիրմին* ամեն օր հազարավոր երկրպագուներ *են այցելում*»:

Կամ՝ «*Ապօրինի թալանվել է* խմբագրությունների գույքը»:

Ավելորդ է *«ապօրինի»* բառը, քանի որ *թալանը* միշտ էլ ապօրինի է լինում:

«Ընդ որում, ճանապարհի և *կեցության* ծախսերը հոգում է եգիպտական կողմը»:

Պետք է լիներ՝ «*ապրուստի ծախսերը*», *կեցություն* բառը շատ ավելի լայն իմաստ ունի, որ անհարիր է այս լրատվությանը:

«Բայց մարդ արարածի անկումն ինչ աստիճանի պիտի հասած լինի, որ իր ձեռքով *սպանածին խոշտանգի*»:

Խոշտանգում են միայն կենդանի մարդկանց. տվյալ դեպքում նախընտրելի էր «որ *սպանվածի դիակը պղծի*»:

«Հայաստան *զաղութներից մեկը լուծարումից* փրկելու նպատակով»:

Գաղութը հիմնարկ-ձեռնարկություն կամ գրասենյակ չէ, որ լուծարվի: Կարելի էր՝ «*ուծացումից փրկելու* նպատակով»:

«Առևտրի այս բնագավառում *արժեքների իջեցումներ* են արձանագրվում»: Պետք է լիներ՝ «*զնեքի*»:

Համաճարակային տարածում է գտել *«արդյունքում»* անճոռնի բառը՝ *«հետևանքով»*, «ի հետևանս» և նման այլ բառերի իմաստով:

«Վրաերթի է ենթարկել մի կնոջ, որ *արդյունքում մահացել է*»:

«...Ապօրինաբար պահվում է բաժնում և դաժան *ծեծի արդյունքում... մահանում է*»:

Մամուլում հայտնվել է մի նորագոյացություն՝ «այլոք» բառը՝ «այլք» գրաբարյան ձևի փոխարեն: Հավանաբար, ստեղծվել է գրաբարյան «այլոց» սեռականի ձևը քմահաճորեն ուղղական հոլովի վերածելու ցանկությունից: Մինչդեռ *ուղղական-այլք*, սեռական-*այլոց*:

Նույն կերպ, մամուլը դժվարությամբ է հրաժեշտ տալիս «մամլ» քերված ձևին, որ ակնհայտորեն կրում է արևմտահայերենը մամակելու ճիգը («մամլո ասուլիս», «մամլո կենտրոն» և այլն): Բայց արևելահայերենն ունի իր կայուն ձևը՝ «մամուլի»:

Լրագրողների բառամթերքում իր հաստատուն տեղն է գտել «առևանգեր» գալթակղիչ բառը՝ միշտ սխալ գործածությամբ. «ավտոմեքենա առևանգեր», «զենք առևանգեր» և այլն: Մինչդեռ, առևանգում են ոչ թե գույք, այլ միայն մարդուն՝ աղջկան, մանկանը, տղամարդուն և այլն:

Կարելի է հիշել անպայման «գրաբար» խոսելու ցանկություն ունեցող քահանայի սիրած բառը՝ «նամանավանդ»: «Նամանավանդ սա ձիս կապեն ու գան», –ասում է տեր հայրն իր հյուրընկալներին: Նման ցանկություն նկատելի է և մեր մամուլում:

«Հայտնաբերվեցին հրազենային մի քանի վերքերից սպանված 22-ամյա պարոն Կարդավայի և 25-ամյա պարոն Գուլուայի մարմինները»: Մի կողմ քողմելով պարոնների առատությունը, ասենք, որ վերքերը լինում են ոչ թե «հրազենային», այլ «հրազենի» և ապա, վերքերից ոչ թե սպանվում են, այլ մեռնում: Փորձենք այլ կերպ՝

«Հայտնաբերվեցին *հրազենով սպանված* 22-ամյա Կարդավայի և 25-ամյա Գուլուայի մարմինները»:

Անհաջող պոետը գրեթե միշտ անհաջող լրագրողի վտանգ է ներշնչում: Թերևս դրա վկայություններից են մամուլում հաճախակի հայտնվող բանաստեղծական կեղծ պաթոսը, պատկերավորության հավակնող խոսքը և բառերի հետ հաշվի չնստելը:

«Ազգային-եկեղեցական ժողովն սկսվեց մոտ ժամը 15-ին, վեհարանի լեփ-լեցուն դահլիճում, որ *ողողված էր* մոտ 200 տեղական և արտասահմանյան լրատու գործակալությունների և հեռուստակայանների *թղթակիցներով և լուսարձակների լույսերով*»:

Որ դահլիճը կարող էր ողողված լինել լույսերով՝ պարզ է, թեև ոչ ինքնատիպ, բայց որ ողողված էր թղթակիցներով՝ ոչ միայն պարզ չէ, այլև տհաճ է:

«Հողում խոնավության պարունակությունն այժմ ավելի չէ, քան հուլիսի *խստաշունչ տապին*»:

«Լստաշունչ» միայն ցուրտն է լինում, բայց տապը՝ երբեք: Բառակապակցությունն անհաջող է:

Լրատվության ակնհայտ թերություններից է բառերի անիմաստ կուտակումը, որի ծավալի տակ կորչում է միտքը: Հազիվ թե ընթերցողը գլուխ հանի հետևյալ մշուշից.

«Հաշտության գործընթացի զարգացման ընթացքը կարող է ապահովել կողմերի համար *ընդունելի կարգավորման միջանկյալ փուլերի առաջին պլան մղելը*»:

Կարելի էր ձևակերպել պահիզ և հասկանալի:

Հաշտության գործընթացի՝ խորացումը կարող է ապահովել կողմերին *ընդունելի միջանկյալ փուլերի կարևորությունը*»:

Լրատվության մեջ ավելորդ բառերը հաճախ հայտնվում են ավելորդ մանրամասներ մատուցելու ձգտումից:

Լեզվին լավ չտիրապետելու հետևանքներից մեկն այն է, որ լրագրողը հակվում է դեպի բառաստեղծություն՝ մեզ ամենքիս հայտնի բարդությամբ ազատություն տալուն: Այս երևույթը հիշեցնում է ամռանը երկու անդրավարտիք կրելու անխոհեմ ցանկությունը. ինչ կարիք կա, խախտելով լեզվական օրենքները, ձգտել նորը ստեղծելուն, երբ արդեն կա մեր ցանկացած իմաստն արտահայտող բառը: Այսպես, վերջին 4–5 տարիների ընթացքում գրեթե բոլոր թերթերի սյունակների մեջ է ներխուժել «լրամշակում» բառը, որը հակառակ հայերենի կանոնների, նշանակում է ոչ թե «լուրի մշակում», այլ «լրացուցիչ մշակում» կապակցության քմահաճ հապավումն է: Բայց չէ որ վաղուց ի վեր այդ իմաստն ունի «վերամշակում» բառը, և արդյո՞ք կալիք կար լրացուցիչ ճիգերի:

«Արդեն արվել էր նախագծի *լրամշակումը*»: Կարելի էր՝

«*Նախագիծն արդեն վերամշակվել էր*»:

«Ամերիկյան ընկերությունների *դուստրային* ձեռնարկությունների կողմից»:

Վաղուց ի վեր հայերենում գործածական է «*դուստր ձեռնարկություն*» հասկացությունը:

«Հարկ է նման իրավունքներ տալ նաև *անասնապղծերի* դեպքում»:

«*Անասնապղծեր*» բառ չկա: Հավանաբար ցանկացել է ասել՝ «*անասնապղծության դեպքերում*»:

«Վրաստանի *իշխանական ներկայացուցիչները* այսօր էլ շարունակում են Թբիլիսիում բանակցություններ վարել արևմտյան նավթային *ընկերությունների միջև*»:

Պետք էր խմբագրել՝

«*Վրաստանի իշխանության ներկայացուցիչները այսօր էլ շարունակում են Թբիլիսիում բանակցություններ վարել արևմտյան նավթային ընկերությունների հետ*»:

«Շրջան» թերթի անշրջանակ շրջանակները *ի շրջանս յուրի...*»:

Պետք է լիներ՝ «*ի շրջանս յուր*»:

«Երկինք բարձրացավ հայոց աղոթքը... *կեցո մեզ, Տեր*»: Պետք է լիներ՝ «*կեցո՛ղ մեզ, Տեր*»:

Բառերի ու նախադասությունների անհաջող ընտրությունն ու կառուցվածքը առանձնապես նկատելի է թարգմանական լրատվության մեջ: Խմբագիրները, դատելով ըստ ամենայնի, երկրորդական նշանակություն են տալիս թարգմանություններին և այդպիսիք հանձնարարում սկսնակ լրագրողներին: Մինչդեռ, հենց այս վերջիններն ապրում են կայացման փուլ և հատկապես կարիք ունեն մշտական վերահսկողության ու խորհուրդների: Ինչի է նման հետևյալ, ըստ իս՝ թարգմանական նյութի լեզուն.

«Նույն օրը երեկոյան, *ինչպես արդեն ընդունված է*, իր տան մոտերքում *ուժեղ ծեծել են* հայտնի հեռուստալրագրող, «ճշմարտության պահ» հաղորդման վարող Անդրեյ Կարաուլովին»:

Ըստ շարադրանքի, դուրս է գալիս, որ խեղճ Կարաուլովին «ուժեղ» ծեծելն է *արդեն ընդունված*, մինչդեռ, լրագրողը նկատի ունի առհասարակ մարդկանց իրենց տան մոտքի մոտ բռնության ենթարկելը:

Նախադասության կառուցվածքը խաթարվում է «կողմից», «այն», «ուղղությամբ» և այլ բառերի անհարկի գործածությամբ, որ մատնում է դրանց՝ ռուսերենից ծագելը:

«Ջրմուղ-կոյուղու տնտեսության ձեռնարկության մասնագետների և սանէպիդկայանի կողմից կատարված խմելու ջրի լաբորատոր ստուգումները ապացուցել են, որ այն մաքուր է»:

Պարզեցրածը՝

«Ջրմուղ-կոյուղու տնտեսության մասնագետների և սանէպիդկայանի լաբորատոր ստուգումները ապացուցել են, որ խմելու ջուրը մաքուր է»:

Ավելորդ լրացումները, ծամծմված և միօրինակ ոճը նախադասությունը դարձնում են ձգձգված, ոչ հստակ.

«Հայաստանի և Վրաստանի սահմանապահ զորքերի հրամանատարները... կանցկացնեն համատեղ միջոցառումներ՝ սահմանային տարածքների հսկման ուղղությամբ»:

Պարզեցրածը՝

«Հայաստանի և Վրաստանի սահմանապահ զորքերը կանցկացնեն սահմանային տարածքները հսկելու համատեղ միջոցառումներ»:

Վերամբարձ ոճը նախադասությանը տալիս է սխալ իմաստավորում, և լրագրողն այս դեպքում հատկանիշ է վերագրում մի երևույթի, որը չէր կարող ունենալ այդ հատկանիշը: Թղթակիցն այցելել է Երևանի առևտրաւար-դյունաբերական պալատ.

«ուր պարզեցինք, որ իսկությունն իսպառ գուրկ է ոգևորության որևէ տարրից»:

Բայց ոչ թե «իսկությունն է (իմա՝ իրերի վիճակը, կացությունը) իսպառ գուրկ ոգևորության որևէ տարրից», այլ ոգևորություն առաջացնելու նրա կարողությունը, ուստի՝

«ուր պարզեցինք, որ ոգևորություն առաջացնող որևէ բան չկար»:

Ահա հատկանիշի ոչ ճիշտ վերագրման մի այլ օրինակ.

«Դա քաջ գիտի մեր հարյուրամյակը, որը հողին է հանձնել անհամար զոհեր»:

Ոչ թե հարյուրամյակը քաջ գիտի կամ հային զոհեր է հանձնել, այլ այս ամենը կատարվել են այդ հարյուրամյակում, ուրեմն՝

«Դա քաջ հայտնի է մեր հարյուրամյակում, երբ հողին են հանձնվել անհամար զոհեր»:

Հատկանիշի ոչ ճիշտ վերագրումը դրսևորվում է նաև անճաշակ և չլիմնավորված ձևով իրերի կամ հասկացությունների անձնավորման դեպքում: Այսպիսի անձնավորումը բավական տարածված է Հայաստանի խորհրդարանի պատգամավորների շրջանում, ուստի դժվար է ասել, թե տվյալ դեպքում խորհրդարանն է ազդում մամուլի վրա, թե՞ հակառակը: Համենայն դեպս, առ այսօր և պատգամավորների խոսքերում, և մամուլի էջերում անընդհատ հնչում են «օրենքը կաշխատի», «օրենքը չի ուզում աշխատել» և նման դարձվածներ: Հետևյալ օրինակում երևում է օրենքի անձնավորման էվոլյուցիան. եթե օրենքին վերագրում ենք մարդկային գործողության հատկանիշ, ապա դրանից հետո ինչը կարող էր մեզ խանգարել՝ դրան զգայություն ևս վերագրելը.

«Մ.Սահակյանը գտնում է, որ ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին օրենքը լիարժեք կաշխատի մեկ տարի հետո, իսկ «ավելի լավ կզգա» սեփականաշնորհման ավարտից հետո»:

Մինչդեռ, կարելի էր գրել պարզ ու հասկանալի.

«Մ.Սահակյանի կարծիքով, ձեռնարկությունների և անհատ ձեռնարկների սնանկացման մասին օրենքը անկաշկանդ կգործի մեկ տարի անց և ավելի լիարժեք՝ սեփականաշնորհման ավարտից հետո»:

Մամուլում հաճախ հանդիպում է լրագրողի անփույթ աշխատանքը. խառնվում են ժամանակները, շփոթվում են գործողության օբյեկտը, գործողություն իրականացնողն ու օբյեկտը: Այսպիսի շփոթը ի հայտ է գալիս ոչ միայն բայի եղանակային ձևերով, այլև խոսքի այլ մասերի խճողումով:

Մամուլում ընդհանրական սխալ է դարձել լրացման լրացումների անհիմն գործածությունը: Դրա հետևանքով դարձվածը դառնում է ոչ միայն ձգձգված, այլև անմիտ:

«Բր վերջնական լուծումը գտավ Ջվարթնոց օդանավակայանի զարգացման ֆինանսավորման հարցը»:

Կամ՝

«Քննարկվել են Հրազդան» մարզադաշտի վերակառուցողական աշխատանքների իրականացման, հեռախոսակայանների աշխատանքների բարելավման մասին հարցեր»:

Կարելի է փոխել՝

«Քննարկվել են «Հրազդան» մարզադաշտի վերակառուցման, հեռախոսակայանների աշխատանքի բարելավման հարցեր»:

Լրագրերում կարելի է հանդիպել պարզապես անկապ դարձվածների.

«Ձախերի հաղթանակը... լուրջ մտավախություն է առաջացրել «աջ բլոկի» ներկայացուցիչներին»:

Պետք է կռահել՝ *«աջ բլոկի ներկայացուցիչների մեջ»:*

Լրացման պակասը կարող է հասցնել մի արդյունքի, որ ամենևին չէր կարող անցնել լրագրողի մտքով.

«Վերջապես կսկսվի ուսուցումը Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցած հայոց ցեղասպանության»:

«Ցեղասպանություն» ոչ մի տեղ չեն ուսուցանում, գոմե դպրոցին այդպիսի առարկա վերագրելը առնվազն դաժանություն է: Ծիշտ կլինե՞ր՝

«Վերջապես կսկսվի Օսմանյան կայսրության մեջ կատարված հայերի ցեղասպանության պատմության ուսուցումը»:

Ընթերցողի միտքը իր հետևից տանելու համար լրատվությունը (ինչպես և առհասարակ լրագրական բոլոր ժանրերը) պետք է կոտրի վարչագործարարական ոճի չորչորուկ և անկյանք սխեմաները: Վարչագործարարական ոճի միակար ու ձանձրալի դարձվածները, բաների և մանավանդ կապերի տարօրինակ, հաճախ պատճենված ձևերը, որոնք միանգամայն խոթր են հայերենին և հաճախ՝ ռուսերենից արված կիսագրագետ թարգմանություններ են, զարմանալիորեն պահպանել են իրենց կենսունակությունը մամուլում: Դատելով ըստ ամենայնի, այս ոճը ամենևին էլ մտադիր չէ գիջումներ անել գրական լեզվին: Առանձնապես ակտիվ է և նորանոր ճարակներ անելու հավակնություններ ունի քրեական լրատվությունը: Դժվար չէ պատկերացնել այս երևույթի բերած ավերածությունները մեր լեզվական մշակույթի ասպարեզում, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այդ բնույթի լուրերը կարդում են ընթերցողների լայն շրջաններ, այդ թվում նաև դպրոցականներ և ուսանողներ: Թվում է, լրագրողները հատուկ ուշադրության կարժանացնեն ոստիկանական լրատվության լեզուն մաքրելու և հայերեն դարձնելու դժվարին և անհրաժեշտ աշխատանքին:

Ահա այդ ոճի մի քանի նմուշներ.

«Ժողովրդական դատարանից նյութեր են ստացվել Կոտայքի շրջանի բնակիչ Հայրապետյանի նկատմամբ»:

Ոչ թե «նկատմամբ», այլ «վերաբերյալ»:

«ՆԳԲ է դիմել... բնակչուհի Պ.-ն այն մասին, որ տանը իր ամուսինը... վիճաբանության ժամանակ ծեծի է ենթարկել իրեն»:

Եթե մի կողմ թողնենք այն, որ այս լուրն իր նշանակալիությամբ արժանի էր ընդամենը հարևանների գրույցի առարկա դառնալու, ապա մամուլում հայտնվելուց առաջ գոնե արժանի էր խմբագրման.

«ՆԳԲ է դիմել... բնակչուհի Պ.-ն՝ հայտնելով, որ տանը իր ամուսինը... ծեծել է իրեն»:

Պարզապես պաշտոնական լրատվությանը ևս պետք է մոտենալ լեզվական մույն չափանիշներով, որպիսիք կիրառվում են առհասարակ լրատվության մեջ: Հավանաբար, կարելի էր հիշել, որ պաշտոնական լուրը արգելանոց չէ և որ դրա վրա, առանց որևէ վերապահության, տարածվում են հայերենի կանոնները:

ИНФОРМАЦИОННЫЕ ЖАНРЫ В ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ АРМЕНИИ

А.А.ХАРАТЯН

Р е з ю м е

Соответствию информационных жанров в периодической печати РА современным требованиям препятствуют некоторые факторы, связанные в основном с игнорированием составных частей текста. Речь идет о таких формальных компонентах, как доступность, вводная часть, краткость, заглавие и т. п. Не менее важны и содержательные стороны изложения информации: актуальность материала, убедительность, фактическая достоверность, компетентность журналиста. Вместе с формальными компонентами последние обеспечивают реальную ценность информации. Преодоление языковых и стилистических недостатков, в свою очередь, расширит возможности информационных жанров для установления обратной связи с общественным мнением. Повышению уровня армянских СМИ может способствовать разумное усвоение современного опыта российской и зарубежной прессы.